ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

04.08.2025 15:38

Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ ***2025 թվականի սեպտեմբերի 13-ին (շաբաթ օրը)*** Երևան քաղաքի Ջաքյան 7-2 հասցեում գտնվող ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- ***ՀՀ փաստաբանների պալատի նախագահի ընտրություն***
- ***ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:***

1. Օրակարգային հարցերով **<u>քվեարկությունը</u>** սկսվում է **2025 թվականի սեպտեմբերի 13-ին, ժամը 09^{00}-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 20^{00}-ին**:
2. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների առաջադրումը (ինքնաառաջադրումը)</u>** սկսվում է **2025 թվականի օգոստոսի 16-ից (ներառյալ) և ավարտվում է 2025 թվականի օգոստոսի 21-ին (ներառյալ)**:
3. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի **<u>թեկնածուների քարոզչությունը</u>** սկսվում է ***2025 թվականի օգոստոսի 22-ից (ներառյալ) և ավարտվում է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին, ժամը 17^{00}-ին***:
4. Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**
5. Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**
6. Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:
7. «ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» **ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի որոշման նախագիծը** ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում հրապարակվելու է **ընդհանուր ժողովի հրավիրված օրվանից ոչ ուշ քան առնվազն**

14 օր առաջ: Նախագծի վերաբերյալ առաջարկները կարող եք գրավոր ներկայացնել ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմ՝ նախագիծը Պալատի պաշտոնական կայքէջում հրապարակվելու օրվանից յոթնօրյա ժամկետում:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկությունները, կարող եք բեռնել ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի աշխատակազմ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })